

5. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ INCOMES

Այս բաժնում ներկայացվող տեղեկատվության աղբյուրը տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի հետազոտությունն է, որի մեթոդաբանության համառոտ նկարագրությունը ներկայացված է սույն ժողովածուի 6-րդ էջում:

Աշխատանքային գործունեությունից ստացված դրամական և (կամ) բնախրային եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնված է SS 15-75 տարեկան **զբաղված** անդամների պատասխանների վրա՝ հետազոտվող յուրաքանչյուր ամսվա հարցմանը նախորդող **վերջին ամսվա** կտրվածքով:

Հետազոտության շրջանակում վարձատրության / եկամտի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնված է ստանդարտացված հարցաթերթի հարցերին հարցվողների (ռեսպոնդենտների) պատասխանների՝ անձնական (սուբյեկտիվ) գնահատականների վրա: Որոշ դեպքերում հարցերի պատասխանները ստացվում են ոչ թե ուղղակի հարցվողից, այլ SS չափահաս այլ անդամից (proxy), որը պարունակում է պատասխանի մոտավորություն: Հարկ է նկատի ունենալ նաև, որ սովորաբար ռեսպոնդենտները հակված են թերագնահատել կամ թաքցնել իրենց եկամուտի իրական չափը: Արդյունքում՝ ստացված տվյալները որոշ դեպքերում կարող են ճշգրիտ չլինել:

Վարձատրության / եկամտի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են հետազոտվող ժամանակահատվածում եկամտաբեր գործունեություն իրականացնող կամ վարձատրվող աշխատանք ունեցող յուրաքանչյուր ռեսպոնդենտից՝ անկախ նրա զբաղվածության կարգավիճակից (վարձու աշխատող կամ ինքնազբաղված՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ հատվածում և այլն), աշխատանքի բնույթից (մշտական, սեզոնային կամ միանգամյա), աշխատաժամանակի տևողությունից (լրիվ կամ ոչ լրիվ աշխատանքայի օր), վարձատրության / եկամտի տեսակից (դրամական և (կամ) բնա-խրային) և այլ բնութագրիչներից:

Տվյալների մեջ չեն ներառվել նրանք, ովքեր հետազոտությանը նախորդող վերջին ամսում աշխատանքային եկամուտներ չեն ունեցել կամ հրաժարվել են պատասխանել եկամուտների չափի վերաբերյալ հարցերին:

Ներկայացվող տվյալները վերաբերում են զբաղվածների հիմնական զբաղվածությունից ստացված աշխատանքային **գուտ եկամուտներին՝ օրենքով սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարումները նվազեցնելուց հետո:**

The source of information presented in this section is Labour Force Survey (LFS) carried out in households. The summary description of survey methodology is presented on the page 6 of this handbook.

The information on monetary and (or) in-kind income generated from employment is based on the responses of 15-75 year-old **employed** persons. Reference period was the last month preceding the survey.

Information on wages / income collected through the survey is based on a respondents' answers or personal (subjective) assessments to the questions of the standardized questionnaire. In some cases the answers of the questions were not received directly from the respondents. The same respondent can provide information about himself personally and about others in the household by proxy. The latter can be approximated value. On the other hand respondents usually tend to underestimate or hide the real size of their income. Due to above mentioned, in some cases data might differ from the reality or to be not accurate.

In the framework of the survey the data on wages / income are collected from each respondent that is during the reference period involved in income generating activity or has a paid job, regardless of the, regardless of his status in employment (employee or self-employed in the formal or informal sectors, etc.) the nature of work (permanent, seasonal or one-time), the duration of the work (full time or part time working day), the type of the remuneration/income (in cash and (or) in-kind) and other characteristics.


The data excludes those, who failed to generate any employment income in the last month preceding the survey or refused to respond to questions on amount of income.

The presented data refers to the **net incomes (after deduction of taxes defined by law and other compulsory payments)** received from the main (primary) activities of the employed persons.

5.1. Միջին ամսական զուտ և նվազագույն աշխատավարձեր^{1,2}
Average Monthly Net and Minimum Wages^{1,2}

	Միջին ամսական զուտ աշխատավարձ, դրամ <i>Average monthly net wages, AMD</i>	Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձ, դրամ <i>Amount of minimum statutory wages, AMD</i>	Նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը զուտ միջին աշխատավարձի նկատմամբ, % <i>The ratio of minimum-to-average net wages, %</i>
2008	61 014	25 000	41.0
2009	75 653	30 000	39.7
2010	81 159	30 000	37.0
2011	83 461	32 500	38.9
2012	89 386	32 500	36.4
2013	94 297	40 000	42.4
2014	121 693	47 500	39.0
2015	127 299	52 500	41.2
2016	128 505	55 000	42.8
2017	102 594	55 000	53.6

Միջին ամսական զուտ աշխատավարձերի անհավասարությունը^{1,2,3}
Inequalities of Average Monthly Net Wages^{1,2,3}



¹ 2008-2013թթ. տվյալների աղբյուրը ՏՏԿԱՀ-ն է, իսկ 2014-2017թթ.-ինը՝ ԱՀ-ն (տե՛ս 11-րդ էջի առաջին պարբերությունը):
Source of information for 2008-2013 is HH ILCS and for 2014-2017 data is LFS (see phirst paragraph on page 11).

² Վերաբերում է միայն տնտեսության ֆորմալ հատվածի այն վարձու աշխատողներին, ովքեր աշխատել են լրիվ աշխատանքային օր:
Refers to the only full-time employees of formal sector of economy.

³ Ցուցանիշը հաշվարկվել է ամենաբարձր աշխատավարձ ստացողների 10%-ի և ամենացածր աշխատավարձ ստացողների 10%-ի աշխատավարձերի հարաբերակցությամբ՝ D90 / D10 կամ D9 / D1: D9 / D1-ն աշխատավարձերի բաշխման անհավասարությունը բնութագրող ցուցանիշներից մեկն է:
Indicator is calculated as a ratio of the top 10% of the highest wage earners and the lowest wage earners (D90 / D10 or D9 / D1). D9/D1 is one of the measurements of the inequality of the distribution.

5.2. Միջին ամսական զուտ աշխատավարձը / եկամուտն ըստ զբաղվածության կարգավիճակի
Average Monthly Net Wages / Income by Status in Employment

	Ընդամենը, դրամ <i>Total, AMD</i>		Տղամարդ <i>Men</i>		Կին <i>Women</i>		
	2016	2017	2016	2017	2016	2017	
Ընդամենը (A-U)	113 684	90 664	127 055	107 304	94 067	72 789	Total (A-U)
Վարձու աշխատող	121 179	100 477	136 850	118 046	99 897	82 489	Employee
Ոչ վարձու աշխատող	97 844	66 857	108 260	83 200	79 782	47 121	No Employee
Ոչ գյուղատնտեսական դրոյր (B-U)	119 397	100 402	132 068	115 993	99 814	82 358	Non-agricultural sector (B-U)
Վարձու աշխատող	121 718	100 571	137 477	118 396	100 305	82 460	Employee
Ոչ վարձու աշխատող	108 640	99 184	112 848	104 670	95 944	80 779	No Employee

5.3. Միջին ամսական զուտ աշխատավարձը / եկամուտն ըստ զբաղվածության բնույթի
Average Monthly Net Wages / Income by Nature of Employment

	Ընդամենը, դրամ <i>Total, AMD</i>		Տղամարդ <i>Men</i>		Կին <i>Women</i>		
	2016	2017	2016	2017	2016	2017	
<i>Ընդամենը զբաղվածություն</i> <i>Total employment</i>							
Միջին եկամուտ	113 684	90 664	127 055	107 304	94 067	72 789	Average income
Վարձու աշխատող	121 179	100 477	136 850	118 046	99 897	82 489	Employee
Ոչ վարձու աշխատող	97 844	66 857	108 260	83 200	79 782	47 121	No Employee
<i>Ֆորմալ զբաղվածություն</i> <i>Formal employment</i>							
Միջին եկամուտ	127 841	103 148	144 250	121 008	105 202	84 260	Average income
Վարձու աշխատող	128 505	102 594	147 580	121 033	104 644	84 115	Employee
Ոչ վարձու աշխատող	123 570	110 746	128 044	120 760	111 206	87 568	No Employee
<i>Ոչ ֆորմալ զբաղվածություն</i> <i>Informal employment</i>							
Միջին եկամուտ	89 714	65 962	99 826	80 788	73 223	49 535	Average income
Վարձու աշխատող	91 593	85 752	100 220	98 898	75 032	70 125	Employee
Ոչ վարձու աշխատող	88 643	58 823	99 579	73 955	72 344	42 474	No Employee

5.4. Միջին ամսական զուտ աշխատավարձն ըստ կրթական մակարդակի
Average Monthly Net Wages by Educational Attainment

	Ընդամենը, դրամ <i>Total, AMD</i>		Տղամարդ <i>Men</i>		Կին <i>Women</i>		
	2016	2017	2016	2017	2016	2017	
Միջին աշխատավարձ	121 179	100 477	136 850	118 046	99 897	82 489	Average wages
Բարձրագույն, հետբուհական	144 984	116 208	167 016	140 514	117 821	96 853	Tertiary, post-graduate
Միջին մասնագիտական, նախամասնագիտական (արհեստագործական)	95 324	83 797	110 012	103 323	80 564	69 765	Secondary specialized, vocational
Միջնակարգ ընդհանուր	95 239	93 625	105 733	106 736	72 831	69 999	General secondary
Հիմնական ընդհանուր, տարրական և ցածր	73 355	85 557	73 355	94 520	...	59 651	General basic, primary and lower

5.5. Միջին ամսական զուտ աշխատավարձն ըստ տարիքային խմբերի
Average Monthly Net Wages by Age Groups

	Ընդամենը, դրամ Total, AMD		Տղամարդ Men		Կին Women	
	2016	2017	2016	2017	2016	2017
Միջին աշխատավարձ Average wages	121 179	100 477	136 850	118 046	99 897	82 489
15-24	102 809	95 633	112 131	110 327	87 593	79 068
25-34	129 183	109 179	140 062	124 940	109 852	87 570
35-44	140 455	107 349	163 511	128 404	105 888	87 468
45-54	109 456	95 709	123 332	115 823	95 299	80 651
55-64	106 890	91 367	123 867	105 475	92 775	77 715
65-75	104 331	90 563	111 162	106 429	88 474	71 225

Միջին ամսական զուտ աշխատավարձն ըստ տարիքային խմբերի
Average Monthly Net Wages by Age Groups

